ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ-ՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՐԱՆՑՎԱԾ ՑԱՆԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 40
Տիպ	Հրաման
Ակտի տիպ	Հիմնական ակտ (17.04.1999-14.07.1999)
Կարգավիճակ	Չի գործում
Սկզբնաղբյուր	ՀՀԳՏ 1999.04.12/4(26)
Ընդունող մարմին	Արդյունաբերության և առևտրի նախարարություն
Ընդունման ամսաթիվ	09.03.1999
Ստորագրող մարմին	Արդյունաբերության և առևտրի նախարար
Ստորագրման ամսաթիվ	09.03.1999
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	17.04.1999
Ուժը կորցնելու ամսաթիվ	11.04.2003

103.0040.09.03.99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան 09.03.99 N 40

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՐԱՆՑՎԱԾ ՑԱՆԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն ՀՀ կառավարության 1998 թ. մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման մի շարք միջոցառումների մասին» N 298 որոշման 5-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում կիրառման համար թույլատրվող հսկիչ-դրամարկղային մեքենաների ցանկը հաստատող տեխնիկական մասնագիտական հանձնաժողովի 1999թ. մարտի 8-ի N 6 որոշումը.

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում կիրառման համար թույլատրվող հսկիչ-դրամարկղային մեքենաների ցանկում ի լրումն մտցվող հսկիչ-դրամարկղային մեքենաների ցանկը (կցվում է):
2. Առևտրի կարգավորման վարչությանը (Գ. Հարությունյան)՝
2.1. Հաստատված ցանկը ներկայացնել համաձայնեցման ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ հարկային տեսչություն, ՀՀ փոստի և հեռահաղորդակցության նախարարություն, ՀՀ կենտրոնական բանկ և ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչություն:
2.2. Հայաստանի Հանրապետությունում կիրառման համար թույլատրվող հսկիչ-դրամարկղային մեքենաների համաձայնեցված ցանկը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարի առաջին տեղակալ Մ. Ձավարյանին:

Նախարար **Հ. Գևորգյան**

Հաստատված է
ՀՀ արդյունաբերության
և առևտրի նախարարության
1999 թ. մարտի 9-ի
N 40 հրամանով

Համաձայնեցված է՝
ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի
նախարարություն
25 մարտի 1999 թ.

Համաձայնեցված է՝
ՀՀ հարկային
տեսչություն
23 մարտի 1999 թ.

Համաձայնեցված է՝
ՀՀ փոստի և
հեռահաղորդակցության
նախարարություն
30 մարտի 1999 թ.

Համաձայնեցված է՝
ՀՀ կենտրոնական բանկ
26 մարտի 1999 թ.

Համաձայնեցված է՝
ՀՀ կառավարությանն առընթեր
ստանդարտացման, չափագիտության
և սերտիֆիկացման վարչություն
24 մարտի 1999 թ.

Ց Ա Ն Կ

ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարի 18.12.98 թ. ՀՀ կիրառման համար թույլատրվող հսկիչ-դրամարկղային մեքենաների հաստատման մասին թիվ 525 հրամանով հաստատված ցանկը լրացնել նոր 37 և 38 տողերով հետևյալ բովանդակությամբ՝

h/h	ՀԴՄ-ի մոդելների անվանումը	Խումբը	Առևտուր	Սպասարկումներ	Նավթամթերքի վաճառք	Հյուրանոցներ և հանրային սննդի ձեռնարկություններ
37	ШТРИХ-М850Ф	Պասիվ	+			
38	AMC	Ինքնավար	+	+		

	100Ф					

Ցանկի 22, 24 և 25 տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

h/h	ՀԴՄ-ի մոդելների անվանումը	Խումբը	Առևտուր	Սպասար-կումներ	Նավթա-մթերքի վաճառք	Հյուրանոցներ և հանրային սննդի ձեռնար-կություններ
22	SAMSUNGER-4615RF	Ինքնավար	+			+
24	ЭЛАН-2000Ф	Ինքնավար	+	+	+	+
25	ЭЛАН-МИНИФ	Ինքնավար	+	+	+	+

** Կիրառման համար թույլատրելի են՝ «Հայաստանի Հանրապետությունում կիրառման համար թույլատրվող հսկիչ-դրամարկղային մեքենաների հաստատված և գրանցված» ցանկում ընդգրկված «МЕРКУРИЙ» մակնիշի տարբեր մոդելների այն ՀԴՄ-ը, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետությունում կիրառման համար թույլատրվող ՀԴՄ-ին ներկայացվող պարտադիր տեխնիկական պահանջներին, արտադրված են Հայաստանի Հանրապետության համար և այդ մասին անձնագրերում առկա են՝ «Արտադրված է Հայաստանի համար» գրառումը:

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2 ապրիլի 1999 թ.
Պետական գրանցման թիվ 0599045

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
28.02.2003, N 25-Ն	09.03.1999, N 40
21.05.1999, N 98	09.03.1999, N 40

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան